ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԵՎՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՑ ՀՈՒՆԻՍԻ 29-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Լևոն Մանուկյանս, աշխատելով որպես Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, 2025 թվականի դեկտեմբերի 29-ից 2026 թվականի հունիսի 29-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ստորև ներկայացվող նախագծերի մշակման աշխատանքներին, որի շրջանակներում մասնակցել եմ մի շարք աշխատանքային քննարկումների, դրանց շրջանառման աշխատանքներին և շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների ամփոփմանը.

1) Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման և շրջանառման աշխատանքներին:

2) Մասնակցել եմ ««Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի մշակման աշխատանքներին:

3) Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքներին:

2. Ներկայացրել եմ. կարծիքներ Վարչություն ներկայացված մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

3. Ուսումնասիրել եմ քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ ՄԻԵԴ-ի կողմից կայացված ՀՀ-ի դեմ վճիռները և դատական պրակտիկան և ըստ այդմ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ:

4. Կազմել եմ ներման խնդրագիր ներկայացրած դատապարտյալների թվով 8 անձնական գործեր:

5. Մասնակցել եմ Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարությունից բխող զեկույցի նախագծի մշակման աշխատանքներին:

6. Կազմել եմ Մարդու իրավունքների պաշտպանից, ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբից, պետական գերատեսչություններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից, դատապարտյալներից և կալանավորված անձանցից ստացված ընթացիկ դիմումների, գրությունների, հարցումների, հաշվետվությունների վերաբերյալ պատասխանների նախագծեր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Լևոն Մանուկյան**

29.06.2026թ.